


### 1.3. Գումարելիի, մնացորդի որոշումը

#### Երեխայի հետ զբաղվողին

1. Տուփում 12 շոկոլադե սալիկ կար: 8-ն ուտելուց հետո քանի՞ սալիկ մնաց:

Պատկերացրու, թե այս տուփի մեջ շոկոլադի 12 սալիկ կա: Դու տուփից 8 հատ սալիկ ես վերցնում: Տուփի միջի շոկոլադը պակաստ՞ում է, թե՞ ավելանում: Քչանում է, ճիշտ է: Այսինքն՝ տուփի միջի 12 սալիկներից վերցնում, հանում ենք 8-ը, **4-ը մնում են:**

**Ուրիշ չեով կրկնենք:** Պատկերացնենք՝ սա տուփն է




Տուփից վերցված սալիկները ջնջենք (մզացնենք, ներկենք, ձեռքով ծածկենք,,): Վերցրել ենք, դրանք արդեն տուփի մեջ չեն: Քանի՞սը մնացին: 4-ը: Տուփում **4 սալիկ** մնաց: Այսինքն՝ **12-ից 8 հանելիս 4 է ստացվում:**

2. Դասարանի համար 9 գնդակ գնեցին, որոնցից 6-ը մեծ էին, մնացածը՝ փոքր: Քանի՞ փոքր գնդակ գնեցին:

Արի նկարելով լուծենք: Դասարանում 9 գնդակ կա:



Սրանցից 6-ը մեծ են: Արի 6-ը մեծացնենք, մեծ գնդակ դարձնենք: Քանի՞ գնդակ փոքր մնաց: Ուրեմն փոքր գնդակները քանի՞սն են: Հաշվիր: Դիշտ է, **3 գնդակը փոքր են:**



#### Հուշում

Ի դեպ, առանց նկարի լուծելիս կարող եմ մարմնավորել հաշվել: 9 մարմններից 6-ը հեռությամբ կծալեմ, հաշվելով մեծ գնդակները, իսկ մնացածը հար-հար կհաշվեմ (դրանով 3-ն են):



3. 7 ավտոմեքենա ավտոկանգառ եկավ: Ավտոկանգառում 11 մեքենա դարձավ: Սկզբում ավտոկանգառում քանի՞ մեքենա կար:

7 ավտոմեքենա կանգառ գալուց հետո ավտոկանգառում արդեն 11 մեքենա կար: Ուզում ենք իմանալ, թե սկզբում կանգառում քանի՞ մեքենա կար: Արի եղած 11-ից հանենք նոր ավելացած 7-ը: (Կարող եք մեկ-մեկ հանել կամ միանգամից, նայած թե երեխայի մոտ ինչպե՞ս է ստացվում:) Այս մնացածը՝ 4-ը հենց սկզբից էլ կանգառում էին:

### Արի խնդիր լուծենք


1.




Նկարին նայելով հաշվիր՝ սկզբում ոզնու զամբյուղում քանի՞ սունկ կար:

Կրկնապատկույց, 9 ոտքով:

2.



Նկարին նայելով հաշվիր՝ քանի՞ խաղաքար էր դուրս մնացել:



Կրկնապատկույց, 8 խոտմուշուկ:



- 3.** Ծաղկամանում 17 սպիտակ ու կարմիր մեխակներ կան: 5 մեխակ կարմիր է: Քանի՞ սպիտակ մեխակ կա:



### Հուշում

*խնդիրը նկարիր, ներկիր ու կկարողանաս հաշվել:*

Մտնուտիտուղ, 15 ուղեւորի զբօսով:

- 4.** Սուրբ Զատիկի համար Անին ու Աշոտը 15 ձու նախշեցին: Անին 7 ձու նախշեց: Աշոտը քանի՞ ձու նախշեց:



### Հուշում

*խնդիրը կարող ես նկարելով լուծել:*

*Կամ սեղանին 15 խորանարդ, կոճակ կամ ուրիշ մանր առարկաներ փոխել և դրանց օգնությամբ լուծիր:*

Մտնուտիտուղ, 8 ջառ:

## Ազատ նախարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստատ կլուծես:)

1. Մարոն խնձորենուց 5 խնձոր քաղեց: 3-ն ընկերներին տվեց: Մարոյին քանի՞ խնձոր մնաց:
2. Վանդակում 8 ճագար կա: Դրանցից 3-ը սև են, մնացածը՝ սպիտակ: Վանդակում քանի՞ սպիտակ ճագար կա:
3. Կարենին 4 ամանորյա նվեր՝ կոնֆետ տվեցին: 2-ը Կարենն արդեն կերել է: Քանի՞ կոնֆետ է նրան մնացել:
4. Թխսկանը 8 ճուտիկ ուներ: Բազեն 2-ը տարավ: Քանի՞ ճուտ մնաց:



5. Մայրիկը 14 նարինջ գնեց: 2-ը աղջկան տվեց: Մայրիկի մոտ քանի՞ նարինջ մնաց:
6. Մանկապարտեզի համար 18 խաղալիք պատրաստեցինք: Դրանցից 6-ը արջուկ էին, մնացածը՝ նապաստակ: Քանի՞ նապաստակ պատրաստեցինք:
7. 10 պաղպաղակից 7-ը կերանք: Քանի՞սը մնաց:
8. Ավտոբուսում և մարդատար մեքենայում 10 ուղևոր կա: Մարդատարում 3 ուղևոր կա: Քանի՞ ուղևոր է ավտոբուսում:
9. Բակում 12 մեքենա կար: Բակում քանի՞ մարդատար մեքենա կար, եթե 4-ը բեռնատար էին:
10. Տատիկը թռռնիկների համար 18 կարկանդակ թխեց: Նախաճաշից հետո 6 կարկանդակ մնաց: Թռռնիկները քանի՞ կարկանդակ կերան:
11. 11 գորտ ավազի ափին տաքանում էր: 5-ը ջուրը մտան: Ավազի վրա քանի՞ գորտ մնաց:
12. Անգարում (ինքնաթիռների կառանատեղի) 18 սպորտային ինքնաթիռ էր կանգնած: 9-ը մրցումների ուղարկեցին: Անգարում քանի՞ ինքնաթիռ մնաց:
13. Տոնածառի շուրջը 12 կենդանի էր պարում: 3 արջուկ հոգնեց ու նստեց: Քանի՞ կենդանի էր շարունակում պարել:
14. Արմենը 9 խնձոր ուներ: Մայրիկը մի քանի խնձոր էլ տվեց: Արմենն արդեն 13 խնձոր ունեցավ: Մայրիկն Արմենին քանի՞ խնձոր տվեց:
15. Դարակի 15 գրքերից 9-ը հայերեն են, մնացածը՝ ռուսերեն: Քանի՞ գիրքն է ռուսերեն:
16. Տոնածառի վրա 6 խաղալիք կախելուց հետո դրա վրա 13 խաղալիք դարձավ: Սկզբում տոնածառի վրա քանի՞ խաղալիք կար:



- 17.** Կարինեն երկու օրում 22 էջ կարդաց: Առաջին օրը 10 էջ էր կարդացել: Երկրորդ օրը քանի՞ էջ էր կարդացել:
- 18.** Ծաղկաթմբին 50 ծաղիկ կար: 20-ը քաղելուց հետո քանի՞ ծաղիկ կմնա:
- 19.** 25 ճնճղուկ ճյուղին էին նստած: 3-ը թռան: Դյուղին քանի՞ ճնճղուկ մնաց:
- 20.** Խանութում 17 չմուշկ կար: 12-ը մենք առանք: Քանի՞ չմուշկ մնաց:
- 21.** Արմենը 17 թերթ կարմիր և կապույտ թուղթ ունի: Քանի՞ թերթն է կարմիր, եթե 11-ը կապույտ են:
- 22.** Երեք թզուկ տնակն էր մաքրում: Երբ անտառից մի քանի թզուկներ եկան, թզուկները դարձան 7: Անտառից քանի՞ թզուկ եկավ:
- 23.** Տոնածառին 20 խաղալիք է կախած: Դրանցից 7-ը սկյուռներ են, մնացածը՝ արջուկներ: Տոնածառին քանի՞ արջուկ է կախած:
- 24.** Դպրոցի մոտ 20 բարդի էր աճում: Աշնանը քանի՞ բարդի տնկեցին, եթե 43 բարդի դարձավ:
- 25.** Գյուղում 24 տուն կա: 18-ը կարմիր տանիքով են, իսկ մնացածը՝ սպիտակ: Քանի՞ տանիք է սպիտակ:
- 26.** Սկյուռը 24 ընկույզ հավաքեց: Նրա ձագուկը 5 ընկույզը կերավ: Քանի՞ ընկույզ մնաց:
- 27.** Դաշտում 58 մարդ է աշխատում: Նրանցից 28-ը կին են, մնացածը՝ տղամարդ: Դաշտում քանի՞ տղամարդ է աշխատում:
- 28.** Դասասենյակում 49 գիրք կար: Երբ երեխաները տնից մի քանի գիրք էլ բերեցին, 63 գիրք դարձավ: Տնից քանի՞ գիրք բերեցին:
- 29.** Բարդու վրա 37 ագռավ էր նստած: 19-ը թռան հեռացան: Ծառի վրա քանի՞սը մնացին:
- 30.** Ծաղկամանում 33 ծաղիկ կա՝ 17 մեխակ ու մի քանի կակաչ: Ծաղկամանում քանի՞ կակաչ կա:
- 31.** Երկու գրքի համար 200 դրամ վճարեցի: Եթե առաջին գիրքը 50 դրամ արժեր, երկրորդն ի՞նչ արժեր:

